

իմրագրութիւնն իւր զրասենեակը պէտք է զրկէ առ այլս, և ոչ ինքն անձամբ երթայ:

Տարագի այն թուոյն մէջ պատրաստութիւն կայ մի կռուոյ, որոյ լեզուին ահա մի ճաշակ. և Մ'ենք այս հայհոյանցին շպատասիանեցինք... զուս փողոցային հայհոյանցներից... խորին զզուանցով էք խօսում այդ մարդկանց մասին... վիճել փոնձիների հետ... բնական բրամտուրեան դէմ... մի շարք փողոցային յիշոցներին, առերին, և անզատ-

կառ զրպարտուրիւններին... վիրաւորւել կարելի է միայն մարդկանցից... » : Այս լեզուն կը գործածէ եղբայր եղբօր դէմ:

Վերջապէս սովիզուած ենք վկայել՝ թէ շատ անմարս են մեզ համար Տարագի մէջ սովորաբար շապանած և ֆրանսիոյ քաղցր լեզուն, նիստ ու կացը, սովորութիւնները, որ այնքան հարազատ են իրեն » (Տարագ թ. 23, 1895), և զեռ այլ ինչ որ չէ տեսած թէ կան իւր մէջ:

Հ.



## Ի ՄԱՅ ՆՈՐԱԹԵՒԻ ՃՆՃՂԿԱՆ



### 2 Ա. Գ

Ոչ, չեմ կարող, մայրիկ, քեզ հետ թըռչել, ախ.  
Մանրիկ են գեռ թեւերս՝ և ոյժըս տըկար.  
Ո՛հ, տես, մայրիկ, ծառիս ճիւղէն մնացի կախ.  
Օգնէ, յանկարծ չընկնիմ ձեռաց մէջ տուար \*

### ՄԱՅ ԿԻԿ

Սիրուն ձագիկ, իջիր հանգչէ դու յիմ գիրկ.  
Աւելի քան քո մայր՝ տանիմ քեզ խընամ.  
Ունիմ հատիկ, ունիմ յըրիկ, վանդակ գիրդ.  
Հիւր եղիր ինձ մինչ քո թեոց ուժոյ ժամ:

### 2 Ա. Գ

Ծնկայ, մայրիկ, յափըշտակեն զիս քեզմէ...  
Մանկիկ, մանկիկ, համար դալար արեւուգ  
իմ նորաբոյս մատաղ կենաց խընայէ.  
Թառմին այտերդ վաղ՝ թէ լինիս ինձ անգութ Կ

### ՄԱՅ ԿԻԿ

Մի՛ լար, իմ ձագ, ինձ մօտ գուն որբ չըմընաս.  
Ա՛ռ զայս համբոյր՝ նըշան սիրոյս իմ առ քեզ.  
Այնէ ծք այն վատ ձեռին՝ որ տայ քեզ վընաս...  
Այժմ ինձ պատմէր ի՞նչ է քո ցաւն աղեկէզ:

Կ

2 Ա. Գ.

իմ եղբարց մէջ ես փոքրիկն եմ եւ անզօր.  
Բոլոր զանոնք հանեց բռնէն իմ մայրիկ.  
Ես այլ անոնց հետ վազեցի դուրս այսօր,  
Ընկայ գետին՝ հիւանդացայ շատ սաստիկ:

Մ Ա Ն Կ Ի Կ

Բերանդ յօդ ես բացեր, ծարաւ ես արդեօք.  
Խըմէ զայս մի կաթիկ ջըրիկ՝ զովացիր...  
Ու գրած գըլխիկդ արդ ափերուս մէջ անհոդ,  
Հանգչէ զինչ քո մօր թեոց տակ փետրալիր:

2 Ա. Գ.

Օրհնէ զքեզ ձեռն՝ որ մեզ, մանկիկ, ետ արեւ.  
Մեծ է քո գութն ու խնամ, սակայն ի՞նչ օգուտ.  
Հետզիետէ ցաւքըս սաստկանան արդարեւ.  
Ունիս մի գեղ ինձ թըշուառիս, ո՞հ, բեր շուտ:

Մ Ա Ն Կ Ի Կ

ԱՌ, չեմ գիտեր գարման, ոչ քո ցաւպծ տեղ.  
Եկ ծառին տակ՝ ուր քո եղբարք կը նըստին.  
Գուցէ տեսնէ զքեզ մայրդ ու տայ յարմար գեղ.  
Ես մի ժամէն դառնամ: առ քեզ վերըստիկ:...

2 Ա. Գ.

Բարեաւ եկիր, սիրուն մանուկ. հասաւ ժամ  
Ուր շիջանի կենացս իմ ճրագ նորավառ.  
Եղուկ որ գեռ չըթույ յօդ գէթ մի անգամ,  
Եւ ոչ Աստուած լըսեց նախկին զիմ բարբառ:

Մ Ա Ն Կ Ի Կ

Այդպէս շուտով կը խամրիս դու, սիրուն ձագ.  
Աշքիդ լուսոյն հետ խաւարի իմ սիրտս այլ...  
Ինչու ըմպեմ կենաց բաժակն ես ցըյագ,  
Ու զքեզ՝ համն իսկ չառած՝ ճըմէ մահուան սայլ:

2 Ա. Գ.

Երկնից կամքն այդ է: Լուր կըտակն այժմ իմին.  
Իմ բընկան մօտ կայ մի վարդի գոզարիկ թուփ,

Դի՛ր զիս անոր տակ. ու զթերթեր կոկոնին  
Սըփոէ վերայս, ծածկեն զեփոին զիս ի ծուփ:

ՄԱՆԿԻԿ

Խսկ ի՞նչ ասեմ քզքեզ ծընող՝ մնուցող մօր,  
Նորափետուր եղբարցգ՝ ոյց հետ լոյս տեսար,  
Ուր թեւ ի թեւ կը վազվազեն աստանօր,  
Բընկան ներս՝ դուրս քեզ վընդռելով վըշտահար:

ԶԱԳ

Այսա. մեռաւ ձեր հէզ փոքրիկ մահագող,  
Մոռացութեան վիճն էջ անյոյս և անլոյս.  
Մանկըկիդ տաք մարդարտաց հետ խառնեն թող  
Զիրենց արտառուքն ու զերգ մահուան խըղճալոյս:

ՄԱՆԿԻԿ

Ես այլ քեզ հետ կու գամ, անմեղ փոքրիկդ իմ,  
Հոն ուր հանգչիք թըռչնիկդ ու վարդն անյարիք.  
Եւ օր մ'այլ զիմ խոր քուն թօթփած՝ վեր թըռչիմ,  
Առած թեւերդ, երգդ ու զվարդին գոյն կարմիր:

Հացունի

ՅԱԿՈՒԼԻ ի 16 յունիսի 1895



## ԾԱՂԿՈՒՆՔ

Սիրաւ մանուկ, սիրէ՛ զծաղիկ,  
Քուկին չըքնաղ պատկերն է այն.  
Երկիր պըճնի նորա զունով զեղեցիկ,  
Եւ քա հասակ շնորհօք միայն.  
Նորա փափկիկ հոսն՝ որոյ քաղցրը շոգին  
կը պըսըսի ափանց վերայ,  
Է նշշանակ, է և վըկայ  
Անմեղութեան քու սուբբ սըրտին:  
Կը խոստանայ նա քեզ անուշ  
Պըտուղ բերել, և յայս կու տայ.  
Խոկ քու սիրուն հասակ քընքաշ  
Դեռ աւելին կը խոստանայ  
Ազուոր ծաղկիդ վերայ հըսկէ,

Հըսկէ անգուլ և անկազար,  
Նորա գոզարիկ ցօղւնին ջրէ,  
Անոր սիրով հոգ և ինամ տար  
Ցուրու հովերէն ըզնա պահէ:  
Բայց զայն այսպէս մըշակելով սիրախնամ,  
Մտածէ որդեակ իմ սիրական  
Թէ քեզ այլ պէտք կայ յարաժամ  
Ուր մէկն հըսկէ քոյդ մանկութեան:  
Վ. Ա. Բ. Դ

Քաղցրիկ գաբնան սիրուն ծաղիկ,  
Ո՛րչափ քու տեսքդ նամայ է ինձ.